Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

40

ՀՐԱՏ. ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԳՏԱՆԳԻԼԵՍՆԵՐԻ

ՑՈՎԱԿԻՄ ՍՍԼՕՎԵԱՆ

ՀԱՐԱԶԱՏ ԳԾԵՐ.

ԱՌԱՋԻՆ ԳՐԱԿ.

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.
«Պուշկինեան տպարան»
1903

891.99
Ս-66

891.99
U-66

12 MAR 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐՈՒ ԷՔՍԱՆԴԻԼԵԱՆՑԻ

ՅՈՎԱԿԻՄ ՍՍԼՕՎԵԱՆ

ՀԱՐԱԶԱՏ ԳԾԵՐ.

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ.

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«Պուշկինեան տպարան»
1903

55642

ՊՈՒ 1-ԳՈ. 2013

Дозвол. Ценз. С.-Петербургъ, 16 Сентября 1903 г.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԻՄ. Ա. Мясницяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

2560 - 72

JUN 3 - 1916

Ս. Դ. ՀԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊՅԻՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՔԼԸՊ

ՁԵՆՔ ՈՒԶՈՒՄ...

Ա.

Տէր Մարտին քահանան, որ յայտնի էր իբրև յետադէմ բանակին պատկանող մի հոգևորական, արագ քայլերով ցած էր իջնում առաջնորդարանի սանդուխքներից։

Իրիկվան ժամերգութիւնից յետոյ սրբազան առաջնորդի մօտ նշանակուած էր նիստ, որտեղ, նախ քան ծխականներին ներկայացնելը, առաջնորդի կարգադրութեամբ քահանաները պէտք է մշակէին ռոճկով իրանց վարձատրելու եղանակը։

Մութն արդէն կոխել էր, թեթև քամին իշխանութիւն էր բանեցնում, երկնքում վառվել էին աստղերը, իսկ սրանց միջից լուսինն իր արծաթադոյն ճառագայթներով ներկում էր մայր եկեղեցու ընդարձակ ու անշուք բակը։

Նիստում արծարծված խնդիրն այնքան լուրջ էր և անսպասելի, որ Մարտին քահանային դա մի առանձին մտատանջութիւն պատճառեց։ Բայց և այնպէս տէր Մարտինն ար-

տայայտեց մի այնպիսի անսպասելի համակրութիւն դէպի դանձանակների և թաբախների վերացնելու գործը, որ բոլորովին զարմացրեց իր պաշտօնակիցներին։ Նա արդէն ցած էր եկել սանդուխքից և քայլում էր եկեղեցու բակով, երբ նրա թևքից մէկը բռնեց և կանգնեցրեց։ Դա եկեղեցիների գործակալ՝ տէր Սերոբն էր, որ նոյնպէս դուրս գալով առաջնորդարանից շտապ-շտապ ուղղում էր իր քայլերը դէպի տուն։

Տէր Սերոբը պատկանում էր առաջադէմ հոգեւորականների թուին։ Այսօրվայ նիստում տէր Մարտինի բռնած դիրքը գործակալին անսովոր թվաց և շատ զարմացրեց։

Եւ միայն այսօր չէ, այլ երբորդ նիստն է արդէն տէր Սերոբը նկատում է, որ տէր Մարտինը մի ջերմ կողմնակից է յարուցած խնդրին։

Սովորած լինելով առաջադէմ և ազնիւ խնդիրների, և կարօտ նրանց իրականացման, տէր Սերոբը քայլում էր այժմ եկեղեցու բակում մի առանձին բաւականութիւնով և իր մտքում կարդաւորում էր նիստի տպաւորութիւնները և խօսակցութիւնները։ Տէր Մարտինի բռնած դիրքը նրան շատ հետաքրքրեց. նա մինչև անգամ ուրախացաւ, որ իրանց դասից գտնվեց մէկը, որ հասկացաւ քահանա-

ներին ռոճկով վարձատրելու առաւելութիւնը։

—Մենք քեզ հետ համամիտ ենք կարծեմ,—ասաց գործակալը, երբ մօտեցաւ տէր Մարտինին։ Զարմանալի է սակայն տէր Հայրապետի հայեացքներն. այդ մարդուն չի լինում համոզել, որ ստորութիւն է ձեռք ձգելը։

Տէր Մարտինը ձեռքը տարաւ մազերին և մի թեթև շարժումով թափ տուեց իր գիսակները ու կանոնաւոր ուղղութիւն տուեց նրանց. յետոյ իր սիրուն աչքերը փոփոխակի ցած գցելով իր յօնքերի տակ ասաց.

—Այո՛, այո՛, շատ լաւ բան է, եթէ միայն ժողովրդի կողմից համակրութիւն գտնի։ Ուզում եմ հաւատալ, որ ժողովուրդը սիրով կընդունի։

—Կարծեմ,—ասաց տէր Սերոբը,—մանաւանդ որ սա հասարակութեան համար ձեռնտու էլ է, եթէ հասարակութիւնն, ի հարկէ, հասկանայ։

—Բայց դուք նկատեցի՞ք սրբազանի բերած օրինակները... Զարմանալի մարդ է, իսկապէս ամեն տեղից տեղեկութիւն ունի։ Լաւ բան է մտածել, զովում եմ։ Իսկապէս սրանից լաւ բան, այսքան տարի չենք հասկացել՝ ամիսդ եկաւ, ռոճիկդ ստացիր... Թէ չէ ինչ բան է ներկայ ձևը՝ կանգնիր մէկի առաջ և բուրվառ

գցիր, ինչպէս մի «Բուրթի» *) գիմաց, ինչ է, որ սա մի քանի կոպէկ փող պէտք է տայ...

—Դէ արի տէր Հայրապետի պէսին բան հասկացուր...

—Է՛, նրա գլուխը չհասած սեխ է, ուզում ես բան հասկացնես: Ես էլ չխօսեցի նրա հետ, տեսար էլի:

—Այժմ, գիտէք, պէտք է մտքեր պատրաստել, հասկացնել, որ նոր ձևը աւելի լաւ է:

—Ի հարկէ, ի հարկէ:

Այդպէս խօսելով նրանք շարունակեցին իրանց ճանապարհը:

Ենորհիւ իր բնորոշ ուղղութեան՝ Մարտին քահանան վայելում էր հասարակութեան մէջ շատ նպաստաւոր համակրութիւն:

—Չէ՛, տէր Մարտինի պէս բարեկիրթ և աղնիւ բարքի տէր քահանայ մենք քիչ ունենք,—ասում էին շատերը: Ինչ է նոյն իսկ տէր Սերոբը, նա, ճիշտ է, կրթվածէ, բայց ինչի՞ է պէտք մեզ այսպիսին, երբ նա ուրիշի կանանց է դայթակղեցնում: Կամ ո՞վ է տէր Վարդանը,—սա խո կաթոլիկ է, պատարագի նշխարը չի կերել, թաղել է եկեղեցու բակում:

*) Բուրթ՝ կուռք:

—Չէ՛, տէր Մարտինի պէս քահանայ մենք չենք գտնիլ. ինչ անենք, որ ուսումով չէ, տասը ուսումովիդ ջիրը կդնի:

Շատերը սիրով ընդունեցին տէր Մարտինին ծխատէր քահանայ. նրան մինչև անգամ դասեր առաջարկեցին, և ամեն տեղ ուր նա յայտնվում էր՝ մի առանձին համակրութեամբ էին վերաբերվում:

Առաջնորդն էլ մեծ պասին քարոզների ժամանակ մի քանի ընտրեալների շարքում թոյլ էր տուել և տէր Մարտինին խօսելու, և շատ-շատերը նրա ասածներից բաւական էին մնում, որովհետև տէր Մարտինը գիտէր խոյս տալ օրվայ հետաքրքրող հարցերից և պտտել երկնից արքայութեան, եկեղեցու խորհրդների, զգեստների և անօթների նշանակութեան խնդիրների շուրջը:

Իսկ փոքրիկ շրջաններում, որտեղ վիճաբանում և տրամաբանում էին քահանաների ռոճկի խնդրի առիթով, տէր Մարտինի բրռնած դիրքը և վերաբերումը դէպի այդ խնդիրը առանձին ուշադրութեան առարկայ էր դառնում:

—Այո՛, այժմ քահանաներն իրանք ուրախութեամբ են ուզում, որ վարձատրութիւնը ռոճկով լինի: Տէր Մարտինի պէսն անգամ ասում է՝ «որ շատ ուրախ է»:

—Դուք տէր Մարտինին ինչպէս էք իմանում,—պաշտպանում էր ուրիշը,—նա ոչ մի բանով ձեր ճեմարանականներից կամ ներսիսականներից պակաս չէ։

Թէև մէկը գտնվեց, որ մի փորձ արաւ պաշտպանելու այն միտքը, թէ տէր Մարտինի հայեացքներն երբէք չեն կարող համապատասխանել եպիսկոպոսի ուղղութեան, բայց պատահելով մի քանի մարդկանց հակառակ հայեացքներին՝ լռեց։

Իսկ տէր Մարտինը տեսնելով իր շուրջը կատարվելիք խօսակցութիւնը քթի տակ ուրախ-ուրախ ժպտում էր.

—Որքան միամի՞տ ու ախմա՞խ են խօսողները։

Եւ նրան շատ դուր էր գալիս, որ իր բռնած ուղղութիւնն անկասելի էր թէ հասարակութեան մէջ և թէ այնպիսի քաջ սրբազանից, որպիսին էր թեմական առաջնորդը։

Բ.

Քահանաներին ռոճկով վարձատրելու խնդիրն օրվայ խօսակցութեան նիւթ էր դարձել քաղաքում։ Ժողովուրդն անհամբերութեամբ սպասում էր, թէ այդ գործն ինչ կերպ պիտի իրագործվի, որպիսի աղբիւրներ պիտի ծառայեն այդ խնդրի համար. երիտասարդները

կարդում էին լրագիրները և հետաքրքրվում էին թէ որտեղ և որ քաղաքում տեղի ունի այդ տեսակ վարձատրութիւնը։ Նրանց առաջ դծագրվում էր այն դեղեցիկ մծտալուտ ապագան, երբ նրանք ստիպված չեն լինիլ քահանաների բուրվառների առաջ կարմրել, և սրանց մտքումը վառվում էր բուռն համակրութիւն և յարգանք դէպի այդ խնդրի հեղինակ՝ թեմական առաջնորդը։ Իսկ քահանաների շրջանում նիստերը շարունակվում էին և այդ խնդրի շուրջն ուղեղներ մրվում։

Այդպիսի նիստերից մէկում տէր Մարտինն մօտեցաւ տէր Հայրապետը և մի փորձ արաւ առաջարկել նրան փակել այդ խնդիրը։

—Եթէ ռոճիկների խնդիրը մէջ գայ, մեր բանը բուրդ է,—ասաց տէր Հայրապետը,—այն ժամանակ մեզ նման քահանաների պատիւը պիտի բոլորովին ընկնի... Կսկսեն հրաւիրել իրանց ուղած կրթուածներին, և այն ժամանակ այն կրթուածներն ուրախութեամբ կգան։ Ցիշում էք տէր Մինասի մահից յետոյ, սրբազանը քահանայութիւնն առաջարկել էր Գարբիէլեանին—համալսարանական է—ռոճիկ էր պահանջել։ Հիմա էլ եթէ այդ խնդիրը դուրս է եկել, էնա վերջ... մեր խեղճ տիրացուները սաղ—սաղ պէտք է գնան ջուրն ընկնեն։ Դրժուար կլինի այդ նոր «Ֆրմազոն» ուսումնա-

կաններին ջարդել։ Այդ պատճառով, կարծում եմ, հարկաւոր է ամեն մի այդպիսի նորաձևութիւն՝ ուսումնական, ցէնդաւոր քահանաների թեկնածութիւն կամ ինչպէս հիմա մէջ են բերել ռոճկի խնդիր միանգամից ջուրը դցել։ Մեզանից առաջ քանի սերունդներ են ապրել այդ տեսակ քահանաներով—ի՞նչ է եղել՝ հայութեան վտանգ է սպառնել ինչ է։ Սաքի հիմա կրթված քահանաները մեզ փրկելու են ի՞նչ է։

—Ես կատարելապէս համաձայն եմ ձեզ հետ,—ասաց տէր Մարտինը,—բոլորովին համակիր եմ ձեր լուսաբանած հայեացքներին, միայն գտնում եմ ձեր բռնած ընթացքը աւելի ձեռնտու հակառակ բանակի համար։ Որովհետև կրթվածների պահանջը հասարակութեան ջերմ ցանկութիւնն է, ուստի խնդրի այդ կէտը չպէտք է անտես անել. իսկ ձեր առաջարկութիւնն անշուշտ արժանի է մեծ ուշադրութեան—պէտք է ամեն կերպ, այո՛, դիմադրել այդ կուսակցութեան ցանկութիւններին, որովհետև նրա պահանջը իսկապէս մի չարաբաստիկ վրտանգ է մեզ համար։ Բայց երբոր չարիքը մեծ է, պէտք է դղուշութիւնն էլ աւելի մտածածին լինի։ Այ, նատենք, գեռ ոչ ոք չկայ, իսկ ես ձեզ ասեմ, թէ ինչ կերպ կարելի է մեր ցանկացած հպատակին հասնել։

—Խնդրեմ, խնդրեմ։

Նրանք նատեցան։

—Պէտք է իմանալ, որ այդ յայտնի կուսակցութիւնը բաւականին ուժեղացել է, մանաւանդ վերջերս, երբ այն տեսակ առաջնորդ ունենք, որ բոլորովին այդ կուսակցութեան կողմնակից է. այնպէս որ ձեր բռնած ուղղութիւնը կարող է յոգուտ հէնց այդ կուսակցութեան ծառայել։

—Ի՞նչպէս։

—Այնպէս։ Այ ինձ լսեցիք մի քանի խնդիրներում՝ ի՞նչ մեծ աջողութիւն ունեցանք. օրինակ՝ տէր Վարդանի պատարագի նշխար թաղելը, տէր Սերոբի կանանց ետևից ընկնելը... այդ տարածած լուրերը իրանց ծառայութիւնն արեցին... Այժմ տեսէք ժողովրդի մէջ այն քահանաները այն համակրութիւնը չեն վայելում, ինչ որ առաջ։ Մի քիչ մնացել է տէր Մխաքը—դա էլ դրանց բանակից է, իմացէք—սրա համար էլ լաւ բան եմ մտածել... բայց այդ մասին կխօսեմ ուրիշ անգամ...

—Այդ բոլորը լաւ է, բայց մեզ չաջողուեց տիրացու Արամի ձեռնադրութեան դործը։

—Դարձեալ դուք հէք մեղաւոր, իմ ասածները չլսեցիք. տիրացու Արամի թուղթը շրջեցրիք և դործ բռնեցրիք մի խամ մարդու ձեռքով,—ինչ է երէցփոխ էր հա՞,—և ի՞նչ ե-

ղաւ. լրագրում բոլոր սխալները երեսներիս տուին։ Ահա թէ ինչից պէտք է զգոյշ լինել։ Ծածկել չկարողացաք։

—Բայց այն գրողին լաւ էլ հասաւ. նա իր կերած հացին հիմա կփոշմանի։ Անցեալ օրվայ ժողովում դուրս գալու ժամանակ նրա գլխին ինչ բերեցին Սադայէլենց Համբարձումը, Դաւոյեցիենց Սահակը, իսկ Շլակն Մկրտիչը—քիչ էր մնում ոսկորները փշրէին...

—Տեսնում էք, հէնց սխալն էլ սրա մէջ է։ Պէտք էր այնպիսի ցոյցեր չանէին։ Լաւ է որ բանն խաղաղութեամբ անցաւ. թէ չէ, նա կարող էր գործը հեռու տանել, նոյն իսկ դատաստանի դցել. իսկ այդ բոլորը ի վնաս մեզ կլինէր։ Զէ, ես այդպիսի ցոյցերի համակարծիք չեմ։

—Ուրեմն զրվի՞։

—Ինչ կայ որ, թող զրվի։ Ցեսոյ մենք էլ միևնոյն նիւթի վրա հակառակ ուղղութեամբ կգրէինք։ Մի զարմացէք, սա հիանալի ճարն է։ Խմբագիրը խօ չգիտէ այստեղ ինչ է լինում, ի՞նչ է կատարվում։ Նա ստանում է միևնոյն խնդրի վերաբերմամբ երկու մէկ-մէկու հակառակ տեղեկութիւններ և ինչով տարակուսանքի մէջ յոդուածը չի տպում։ Տեսա՞ք ինչ ճանապարհ կայ։ Բացի սրանից, երբ որ լուրը կանցներ հայոց լրագրութեան, և երբ նա

դուրս կգար, դա կրաւէր ամիս, աւել, իսկ մինչև այն ժամանակ մենք մեր բանը կաեսնէինք։

—Բայց ի՞նչ պէտք է անել դիցուք ներկայ խնդրում։ Երևակայիր, որ ես տարեկան աշխատում եմ 2500 բուբլի, իսկ ինձ ասում են, որ ռոճիկ կնշանակվի 1300-ից մինչև 1500 ը։ Սխալ ի՞նչու համար մարդ զրկվի այդ արդիւնքից։

—Ահա այդ է խնդրի գերազանց կողմը, այդ տեղ էլ հարկաւոր է սառնութիւն։ Պէտք է ցոյց տալ, որ խնդրին վերաբերվում ենք բարեկամաբար, մեր հակառակ բանակի քահանաներից, մանաւանդ տէր Սերոբից պէտք է բոլորովին ծածուկ պահել և զգոյշ լինել։

—Իսկ յետո՞յ...

—Ցետոյ ամեն տեղ պէտք է աշխատել հակառակը քարոզել։ Հասկացնել հասարակութեան, որ նրա վրա տուրք են դնում և բաւականի ծանր տուրք։ Եւ թէ հարուստը, թէ աղքատը միահաւասար պէտք է այդ տուրքը տայ։ Պէտք է ասել, որ ռոճիկը կմոցնէ քահանաների մէջ ծուլութիւն, թէ երբ կհրաւիրեն ծիսակատարութեան, քահանան չի գալ, քանի որ իմանում է փող չի ստանալու։ Պէտքէ...

—Բայց չէ որ սրանով կիմացվի, որ մենք ենք արել. այդ բանը եպիսկոպոսի ականջը կընկնի։

—Դեռ ժիմաբ չենք։ Ո՞վ է ասում որ դու արա, կամ ես անեմ։ Եղբայր, փեսայ, բարեկամ չունե՞ս. ես ազգական չունե՞մ, նրանք կանեն։ Վերջապէս մենք ունենք այնպիսի տիրացուներ, որ նրանք էլ շատ լաւ ծառայութիւն կանեն գործին։ Մանաւանդ իմացէք, որ մեր տեղական հասարակութիւնը ոչինչ չի հասկանում մեր հասարակական գործերից։ Մինչև անդամ այն մարդիկ, որոնք կրթված են համարում իրանց, նրանք ևս այդ խնդիրներից շատ քիչ բան են հասկանում։ Իսկ եթէ ժողովում մի երկու մարդ կայ, սրանց ձայնը կտրել շատ հեշտ է. հէնց որ բերանը բացին թէ չէ՝ հարկաւոր է հարայով խլացնել նրանց... Հասկացա՞ք։ Սա առաջին ճարն է—հարայ, որքան կարելի է ազատ և համարձակ հարայ։ Հիմա իմ միտքն ըմբռնեցիք։

—Ինչպէս չէ։

Ահա՛ թէ ինչ պէտք է անել։ Պէտք է իմանալ օգտվել հասարակութեան տգիտութիւնից։ Ի հարկէ դէպքը լիներ ուրիշ հասարակութեան մէջ՝ մեզ այդպիսի մանեովը չէր աջողվիլ։ Երբէք դէմ մի եղէք ոչ մի նորութիւնների. ընկերներից ոմանց տուեցէք նոյն իսկ մօտ համակրութիւն, այն ժամանակ կունենանք աջողութիւն. հակառակ դէպքում ձեզնից կխուսափեն, չեն հրաւիրիլ ոչ մի ժողովի։ Իսկ երբ

իմացաք, տեղեկացաք դրանց մտադրութիւններին, այն ժամանակ նրանց միրուքը կլինի ձեր ձեռքումը... բայց զգոյշ, տէր Սերոբը գալիս է։ Տե՛ս, ինչպէս փշրվելով է գալիս...

Այդ միջոցին դահլիճ մտաւ տէր Սերոբը։ Տէր Մարտինը վեր կացաւ տեղից և խոր սիրալիր հայեացք պարգևելով երեսին ասաց.

—Ի՞նչ եղաք, սպասելով հոգիներս ջուր կտրվեց։

—Գործ պատահեց. մկրտութիւն կար։

Այնուհետև ժողովվեցին միւս քահանաները և դիմեցին խորհրդածութեան։

III.

Օրիորդաց դպրոցի դահլիճում ժողովվել էր մի արտասովոր բազմութիւն։

Երբէք ծխականների ժողովներն այնպէս բազմամարդ չեն եղել, ինչպէս այդ անդամ։ Ժողովվուածների մէջ կային և այնպիսիները, որոնք առաջին անդամ ոտ էին դրել դահլիճը։ Այդ նկատվում էր նրանց խամ ու երկչոտ հայեացքներից։

Եկել էին ինչ ասել կուզի և բոլոր քահանաները։ Սրբազանն արդէն բռնել էր իր տեղը։ Նա զանգահարեց և բացեց ժողովը։

—Օրինական թիւը դումարուած լինելով, —ասաց սրբազան նախագահը,—յայտարարում

եմ ժողովը բացված։ Ներկայ ժողովին առաջարկվում մի խնդիր, որ եթէ նորութիւն էլ լինի, կարծում եմ լսած կլինէք։ Վերջերս քահանաների մէջ մշակվում էր հոգևորականներին ռոճկով վարձատրելու խնդիրը։ Նատ անգամ ինձ պատահել է լսել դժգոհութիւն քահանաների ներկայ վարձատրութեան եղանակի դէմ... Ինքս էլ անձամբ համամիտ լինելով բողոքողների հետ դալիս եմ այն եզրակացութեան, որ ներկայ վարձատրութեան սիստեմը պէտք է փոխել։ Այստեղ ձեզ համար կկարդան քահանայական նիստերում մշակած ուսումնասիրութիւնը, որից կտեսնէք, թէ ինչ միջոցներ է առաջարկվում։ Այդ առաջարկութիւնները կարդացվելու են իբրև տեղեկութիւն։ Ժողովը կարող է ինքն իր կողմից առաջարկել աւելի կատարելագործված սիստեմ։ Առ այժմ կասեմ այսքանը՝ ռոճկով վարձատրելու փորձեր ներկայումս կան մեր մէջ, օրինակ՝ Բաթումում կամ Անդրկասպեան երկրում—վարձատրութիւնը ռոճկով է։

Սրբազանը լռեց և դառնալով արձանագրողին պատուիրեց պատրաստել թղթերը։ Մինչդեռ ժողովականների մէջ սկսվեցին արտայայտվել անբաւականութիւններ և դժգոհութիւններ։ Մէկը մինչև անգամ նկատեց բաւականին բարձր ձայնով։

—Բաթումի բանն ուրիշ է։

Երբոր մի քիչ իրարանցումը դադարեց, սրբազան նախագահը շարունակեց։

—Առ այժմ կբաւականանամ այսքանով... Առաջարկում եմ ժողովականներիդ յայտնել կարծիքներ...

Իրարանցումն ու դժգոհութիւնը սաստկացաւ։ Որոշ կերպով լսվում էին խօսքեր.

—Այսքան տարի եօլա ենք գնացել, ինչ կարիք կայ այսպիսի հարցեր առաջ բերելու։

—Երևի թէ մի որոշ նպատակով է։

—Բոլորովին աւելորդ է։

—Ժամավաճառ ենք լինում միայն։

—Հարկաւոր չէ. չենք ուզում։

Այդ խօսքերը խոր կերպով վիրաւորեցին ծխականներից մէկին։ Նա տեսնում էր այդ խօսքերի տակ թաղնված մի ինչոր ակնարկներ ռոճկի կողմնակիցների հասցէին և զգալով իրան ևս խիստ վիրաւորված, չդիմացաւ ու վերկացաւ պաշտպանելու խնդիրը։

—Սրբազան հայր, կկամենայի իմ կարծիքը յայտնել այդ խնդրի մասին։

Եւ խօսելու թոյլտուութիւն ստանալով, նա շարունակեց.

—Այդ խնդիրը մեզ պէտք է ամենքիս հետաքրքրէ...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. Կ. Ա.
2380-72

Ամենքիս էլ հետաքրքրում է,—կցեց մեկը եւեւից։

—Խնդրեմ մի ընդհատեցէք։ Կամենում էք, խօսէք. ես կսպասեմ։

Եւ ուղղելով իր մազերը, խօսողը մի սուր նախատական հայեացք գցեց ընդհատողի վրա։ Նրա խոր համոզմունքը և հաւատը դէպի իր պաշտպանած խնդիրը նրա ձայնին և երեսին պարգեւեցին մի արտասովոր լրջութիւն։ Երեսի դծերն աւելի փայլեցին, աչքերն աւելի վառվեցին։ Նա ձայնը բարձրացրեց և շարունակեց։

—Մենք ընդունում ենք արդեօք սկզբունքով, որ թաբախները և բուրվառները վիրաւորական են քահանայի համար. թողնենք քահանաներին, վարձատրութեան այդ ձեւը նեղութիւն է պատճառում և ժողովրդին։ Այդ փաստեր են, որոնց դէմ վիճելու կարիք չկայ։ Այժմ մտածենք, ի՞նչով փոխարինել այդ հնացած սիստեմը։ Ես ընդհանուր դծերով ուզում եմ շօշափել այսօրվայ խնդրի կարեւորութիւնը։ Ամեն մի պաշտօնատեղում, իւրաքանչիւր պաշտօնեայի համար ամենապաւ վարձատրութեան եղանակը համարւում են ոչ թէ պատահական տուրքերը, այլ որոշված չափն ու ռոճիկը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել. անորոշ չափը տրամադրում է պահանջել աւել և հասցնում է այն կէտին, որին սովորաբար կաշառք անունն

են տալիս։ Ներկայ խնդրում քահանայի վարձատրութեան միակ եղանակը պիտի լինի ռոճիկը։ Եթէ կայ մի ուրիշը, թող մեզ ասեն, լսենք։ Իսկ երբ մենք սահմանած ռոճիկ կունենանք, այն ժամանակ մենք կարող ենք քահանայացնել և մեր ուզած մարդուն։ Պատահական տուրքերը շատ ձեռնտու են անպատրաստ և անկիրթ քահանայի համար։ Այդպիսիները չեն ամաչում նոյն իսկ սակարկել, տուած վարձը յետ ուզարկել։ Լոկ խօսք չլինի իմ ասածը, ես գիտեմ մի այդպիսի դէպք. բուրվառի ժամանակ քահանաներից մէկը նկատում է, որ մինը հարուստ ծխականներից աշխարհականը սովորականից պակաս է տալիս—և ի՞նչ, քահանան միւս օրը աշխարհականը յետ է ուղարկում նոյն ծխականին և յիշեցնում է, որ նա սխալված է, որ իր սովորական աշխարհականից պակաս է տուել... Մի՞թէ դա սակարկութիւն չէ, և մի՞թէ ցանկալի են այդ տեսակ դէպքերը...

—Զլսված զրպարտութիւն է։ Վերջապէս շատ ձիգ էք խօսում։ Հայը սրբազան, մի՞թէ կարելի է թոյլ տալ այդքան երկար ժամանակ լինելու։ Մենք բոլորս գործի տէր մարդիկ ենք, մի՞թէ կարելի է այսչափ երկարացնել. մինչև կէս գիշերը խօ չենք մնալու։

Բարձրացաւ դժգոհութիւն։ Ռոճկի կողմակից ծխականը լսելով այդ խօսքերը թէև

լռեց, բայց և այնպէս նրա երեսի խորշոմներից կարելի էր նկատել, որ նա խորին դժգոհութեամբ զսպեց իր մէջ իր արդարացի բարկութիւնը:

Իսկ այդ միջոց մի ակնոցաւոր պարոն եաւի կարգերում շարունակ այս ու այն կողմն էր անցնում և սրում և պատրաստում իր մարդկանց, որ գոչեն. «չէ՛նք ուզում»:

Դրութիւնն անախորժ էր. սրբազան նախագահը շարունակ զանգահարում էր:

—Ով որ գործ ունի և շտապում է, նա կարող է գնալ,—ասաց սրբազան-նախագահը, —իսկ կարծիքներ յայտնելու խնդրեմ մի խանգարեցէք:

Սակայն սրբազանին լսող չեղաւ:

—Ո՞վ կերաշխաւորի մեզ, որ քահանաները ռոճիկ ստանալով արիութեամբ կվերաբերվեն իրանց պաշտօնին,—լսվեց մի այլ ծերխականի ձայն:

—Ի հարկէ, ի հարկէ, շատ ճիշտ է: Այժմ քահանան գալիս է, գիտէ որ վարձ պէտք է ստանայ, իսկ ռոճիկ ստանալով՝ չի գալ, խոչեմ կռուիլ հետը:

—Այժմ չի՞ պատահում, որ քահանան մոռանում է այցելել աղքատի տունը,—ասաց ռոճկի կողմնակից ծխականը,—ընդհակառակն՝ երբ կլինի ռոճիկ, աղքատի և հարստի տարբերութիւն էլ չի լինիլ. քահանան պարտաւոր կլինի միատեսակ վերաբերվել ամենքին...

—Ինչ անդադար սա է խօսում: Բաւական է ինչ խօսեցիր. չէնք ուզում քեզ լսել...

—Որ այդ խնդիրը ժամանակակից պահանջ է,—շարունակում էր ծխականը, ուշադրութիւն չդարձնելով իր ընդհատողներին,—և սրբազան հօր առաջարկը շատ հիմնական ու տեղին, ապացուցում՝ այն հանգամանքը, որ այդ ձևն ընդունված է և մի քանի քաղաքներում: Վկայում են այդ և լրագիրները, որոնք առիթից օգտուելով ամեն անգամ պախարակում են այդ վիրաւորական ձևը: Ես մի անգամ ևս պաշտպանում եմ սրբազան հօր առաջարկը՝ իբրև զուտ ժամանակակից և մեր հասարակութեան համար արժանի առաջարկութիւն...

—Չէնք ուզում, չէնք ուզում... Մի՛ խօսիր...

Տիրեց մեծ աղմուկ: Տէր Մարտին քահանային մնացաւ տէր Հայրապետը և մի ինչոր բան փսփսաց ականջին. այդ ժամանակ տէր Մարտինի երեսի վրայից սահեց մի ինքնաբաւական ժպիտ: Նախագահ-սրբազանը շարունակ զանգահարում էր՝ սակայն աղմուկը չէր դադարում և գոչիւնները գնալով սաստկանում էին:

—Չենք ուզում, չենք ուզում, չենք ուզում...

Այդ միջոց մի ծերունի արտակարգ կերպով բարկանալով սկսեց այնպես գոռալ, որ դահլիճի պատերը դղրդացին։

—Հայր սրբազան, այդպես չի լինիր, աղաղակում էր նա։

Սրբազան-նախագահը կարգադրեց գոռացողին մօտ կանչել։

Ծերունին մօտեցաւ, փարիսեցիական կերպով առնելով սրբազան նախագահի աջը, շարունակեց.

—Սրբազան հայր, այդ խնդիրը ո՞վ է յարուցել—քահանաներն են անբաւականն իրանց անապահովութիւնից, նրանք խնդրում են մեզնից ռոճիկ տալ...

Փորձեցին հասկացնել, որ քահանաներն ապահովութեան խնդիր չեն յարուցել, այլ հարցը դրվում է սկզբունքով, բայց 70-ամեայ փորձը խեղճ ծերունուն չէր կարողացել շնորհել գոնէ այնքան ըմբռնողութեան ընդունակութիւն, որ սա տակտ ունենար լսելու ուրիշի կարծիքը։ Նա ընդհակառակն աւելի ուժեղացրեց իր ձայնը։

—Ուրեմն որ չեն խնդրում,—գոռում էր նա,—էլ ի՞նչ կարիք կայ այդպիսի հարցեր ժողով բերելու և ծխականներին զուր տեղը անհանգստութիւն պատճառելու։

Նրան պաշտպանեցին՝ գոռալով ամեն կողմից.

—Չենք ուզում, չենք ուզում, չենք ուզում...

Իսկ ծերունին իր վերջին ճիգը լարեց և մաղձը թափեց այն ծխականի գլխին, որը յանդգնութիւն էր ունեցել պաշտպանել սրբազանի առաջարկը։

—Դու ի՞նչ ես հասկանում, որ խօսում ես. միշտ պէտք է այդպես պարտակ-մարտակ խօսես։..

Նրանք, որոնք հարցին կողմնակից էին, խուսափելով սկանդալից լռեցին. իսկ սրբազան-նախագահը ըմբռնելով ծխականների սարքած տրամադրութիւնը՝ հարցը վերցրեց մէջտեղից և ժողովը փակեց։

—Ի՞նչպէս էր,—հարցրեց տէր Մարտինը տէր Հայրապետից, երբ սրանք դուրս եկան փողոց։

—Յարգում եմ, պաշտում եմ ձեր խելքը—էլ ի՞նչ... մարդավարի ջարդեցինք...

ՀԻՆ ԵՐԳ.

ԶԱՏԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ

—Աստիճանաւոր Մարկոսեանը վերադարձաւ պաշտօնից խիստ յոգնած և յուզված: Նա զգուշութեամբ բացեց տան դուռը, նախասենեակում հանեց վերարկուն, ցած դրեց գլխարկն ու ձեռնփայտը և անխօս շարժում գործեց դէպի սենեակները:

Սա միջին տարիքի տէր մարդ էր, կորացած մէջքով. սև աչքերը մի թափանցող հայեացքով նայում էին թաւ յօնքերի տակից, յօնքերի, որոնք խիտ-խիտ բուսած լինելով, նմանում էին բաժան-բաժան թփիկների. իսկ լայնեղը կօկարդաւոր գլխարկի տակից դուրս էին ընկնում նրա երկար ականջները: Մարկոսեանը մանաւանդ այսօր իրան զգում է շատ վատ: Օտարոտի մտքեր յաճախ են պաշարում նրան և զրդռում նրա մէջ որոշ տեսակի բարկութիւն. այդ պատահում է մանաւանդ ամսական ռոճիկը ստանալու ժամանակ,

երբ սահպուած է լինում բոլոր ամսականը բաժանել պարտքերի: Այդ օրերը նրա աչքում ընդունում են անգոյն կերպարանք. մարդիկ և շրջապատողները նրան զրդռում են խօսքի թեթև ակնարկով անդամ: Խօսակցութիւնը դառնում է կցկտուր և նրա ամբողջ տրամադրութիւնն արտայայտում է խիստ տաղտկութիւն: Իսկ այսօր նա այնքան էլ զրդռվելու տեղիք չպիտի ունենար: «Զատկական» կոչված նուէրները, որոնք դրվում են սովորաբար աստիճանաւորներին ռոճկից դուրս, խոստանում էին մի քիչ թեթևացնել նրա դրութիւնը և այդ նուէրների շնորհիւ այդ ամիսը չպիտի նմանէր միւս ամիսներին... Սակայն նրա յոյսերը չարդարացան... «Զատկական» նուէրներն այս տարի չտրվեցին... և այդ հանգամանքը վշտացրեց պաշտօնեաներին, իսկ Մարկոսեանին՝ իբրև աւելի զգայուն մարդու, խոր վիրաւորանք պատճառեց:

Մինչդեռ չորս օրից Զատիկ է:

Ընտանեկան բազմատեսակ ծախսերն ամեն ամիս թողնում են Մարկոսեանի շինքին պարաք, իսկ այս անդամ Զատկի պատճառով սպառնում են իրանց մեծութեամբ և ծանրութեամբ: Մարկոսեանը լաւ գիտէ թէ ինչ են բերում տօները նրա համար: Իւրաքանչիւր տօնից յետոյ ամիսներով հատուցանում

է պարտքը և հաղիւ թէ մի քիչ թեթևանում է, մնանում է մի ուրիշ տան, այնտեղ կրկին նոր պարտք և այդպէս մի տարի չէ, երկու չէ,—այլ շարունակ 15 տարի է, որ Մարկոսեանը տնքում է այդ նեղութիւնների տակ:

Իսկ զատկական տօների առիթով անխուսափելի ծախսերը—չէ՞ որ անհամեմատ աւելի են:

Մարկոսեանին դիմաւորեց նրա կինը: Նիհար, մաշուած էր նա. գունատ երեսին արտայայտում էր խիստ հոգնածութիւն. կրծքի վրայի կարտուած օձիքից բարձրանում էր նրա ղուխը, որին սև մազերը շրջապատել էին անփոյթ կերպով:

Կինը սովորականից աւելի ուրախ կերպով դիմաւորեց նրան: Նա պատրաստվեց մինչև անգամ մի բան ասելու:

Դառն փորձերից Մարկոսեանը գիտէ, որ այժմ կինը կրացէ նրա առաջ ծանր պարտքերի մի յուզիչ ցուցակ և այդ առիթով տեղի կունենայ տաք խօսակցութիւն:

Մարկոսեանն անխօս նստեց պատրաստած ճաշի սեղանի առաջ և ամփոփեց յաղեցնել իր քաղցը, քանի որ կինը չէր սկսել իր խօսքը:

Տիկին Հեղինէն (Մարկոսեանի կինը) նոյնպէս մասնակցեց ճաշին: Նա անհամբեր շարժում էր գդալը և, կարծես, մի ինչոր բան պատրաստվում էր ասելու: Սրդէն այդ ուղղութեամբ նրա բերանի անկիւնները թեթև շարժում գործեցին:

Մարկոսեանն ամանի առաջ կռացած ուտում էր:

Սակայն լռութիւնն երկար չտևեց:

Ներս մտաւ մնագործը:

Մարկոսեանի դառն և խոր հոգոցը զուշակեց դրամայի սկիզբը:

Տիկին Հեղինէն, ցած դնելով գդալը, բացականչեց.

—Ինչո՞ւ եկար, չե՞մ ասել, որ չգաս... Ես ինքս կբերէի.

—Աղբերս նեղանում է, ես չէի գալ... Իմանում էք, ձեր վրա 15 մանեթ է հաւաքվել: Այս ամսվայ հաշուից 10 մանեթ, և 5 մանեթն էլ անցեալ ամսվանից է մնացել...

—Անցեալ ամսուանը մնայ,—ասաց տ. Հեղինէն,—չգիտե՞ս, որ տօներ են:

—Բայց այդպէս էկող ամիս ձեզ համար աւելի ծանր կլինի:

Մարկոսեանը ղլուխն անհամբեր շարժումով ցած դցեց և մի ծանր հոգոց հանեց:

—Տասը բուբլին տուր, գնայ,—ասաց նա, —հինգը մնայ...

—Տեսնում ես, էլի աղան, ես ուզում էի միայն 8 ռուբլի տալ. արի ութը ռուբլի վերցուր։

—Չէ, չէ, խնդրում եմ, ինձ էլ փող է հարկաւոր։ Աղբերս կնեղանայ։ Ամիսը մի անգամ պիտի հաշիւը յստակել... թէ չէ էդպէս ամեն ամիս ճնալով բան չի դուրս գալ։

Ճաշը շարունակվեց։ Մսագործը գնաց։ Եկաւ հայթուխը. Մարկոսեանը ճաշը կիսատ թողեց ու վերկացաւ։

—Մի՞թէ չի կարելի այնպէս անել, որ սրանք գան ճաշից յետ,—բարկացաւ նա,—մարդու ճաշել անգամ չեն թողնում։ Մի՞թէ ամեն տանտիկին այդպէս է կառավարում տունը։

Հեղինէն ցած դցեց գլուխը։ Սա հին երգ էր։ Կինը ճնում էր միշտ մեղաւոր այն դէպքում, երբ խանութպանները շրջապատում էին ամսի 20-ին, ռոճիկ ստանալու օրը, Մարկոսեանի տունը։

Նա պէտք է գործ դնէր ամեն միջոց, որ կարողանայ մի կերպ ռոճկի ստացած քանակը բերել բռնեցնել ամսական պահանջների հետ։ Սակայն այդ նրան չէր աջողվում։ Նրա մաքով անգամ չէր անցնում մեղադրել այդ դէպքում ամուսնուն, սակայն այդ տեսակ տեսարանների ժամանակ այնքան էլ չէր արդարացնում նրան։

Այդ դիտակցութիւնը միշտ պաշարում էր նրան, երբ օրական պիտոյքների ծախսերի մասին պիտի հոգար։ Նրան սաստիկ վշտացնում էր այն հանգամանքը որ օրէցօր ուտելեղէնները թանգանում էին, կեանքն ու ապրուստը ծանրանում էր, մինչդեռ ամսական ռոճիկը զուգահեռաբար չէր բարձրանում։

Ճաշից յետոյ կինը բերեց մի ցուցակ, որով պէտք էր հատուցանէին ամսական վճարները...

—Զուր բերողին պէտք է տալ մի ռուբլի,—կարդում էր Հեղինէն,—նաւթի՝ 1 ռ. 12 կ. ... Իսկ խանութից վերցրած է տան համար մանր բաներ՝ 8 ռ. 72 կոպէկի...

—Ես քեզ քանի անգամ եմ ասել,—ընդհատեց Մարկոսեանը,—որ այդ խանութից չը-պէտք է բան վերցնել։

—Ինչպէս անեմ որ չի լինում... Ահա այժմ հարկաւոր է շաքար, թէյ էլ չունենք... Իսկ իւղ, ալիւր այս ամիս կառնե՞նք...

Ամուսինը լռեց. մի ծանր հոգոց դուրս թռաւ նրա կրծքից։ Կնոջ ներկայացրած հաշիւը սարսափելի էր իր սպառնական մեծութիւնով։ Եթէ այդ բոլոր պարտքերի և գնեւիքների երրորդ մասը դրվի, դարձեալ նրանք ճնում են Զատիկվան առանց կոպէկի։ Մինչդեռ այդ օրը ինքն ըստ ինքեան արտակարգ

ծախսեր կային, իսկ հետևեալ ամսի 20 ը դեռ շատ հեռու էր։

Հասաւ թաթախման օրը։ Վերջին կոպեկները Մարկոսեանը տուեց տան քրեհին. նրա ձեռքում մնաց միայն 1 ր. 75 կ. այդ փողի մի պատկառելի մասն էլ գնաց իրիկուան ընթրիքի պատրաստութեան։ Մարկոսեանը խիստ տխուր և կտրված սրտով գնաց եկեղեցի։ Ամբողջ մարմնու մէջ նա զգում էր թուլութիւն, իսկ քունքերի տակ կարծես մէկը ուժգին հարուածներ էր հասցնում։

Թեթև քամին թռիչք էր գործում նրա առաջ և անհետանում հեռուում, և սրա հետ սահում ու կորչում էին լոյսի վերջին շողքերը։ Նրան թվում էր, որ այդ քամու հետ ոմնական ուրախ արամադրութիւններն էլ գընում էին ու թռչում, ինչպէս սրտի մի ուրախ զրգիռ, կուսի մի յանկալի ժպիտ և կամ արևի վերջին ոսկեզօծ շող։.

Նա հասաւ եկեղեցուն և կանգնեց։ Մի նոր միտք ծագեց նրա մէջ։ Նա գցեց իր աչքերը եկեղեցու դռներին և չվստահացաւ մտնել։ Մարկոսեանը մտաբերեց, որ այդ երեկոյ սովորականից աւել զանձանակներ պիտի շրջեցնեն։ Նրա ծանօթներից մինը կշրջեցնէ տեղական հոգաբարձութեան օգտին զանձանակ, մի ուրիշը՝ դպրոցի համար... Գոնէ չլինէին այդ կողմնակի ծախսերը։ Սակայն չէ՞ որ մարդկանց սովորութիւններն այնքան էլ հեշտ չեն ամփոփվում մեր ուզած շրջանակներում։

Նա մի խորին դժգոհութիւնով խեղդեց իր սրտում այդ ցաւը և վճռեց դուրսը մնալ, եկեղեցի չմտնել։ Զտալ սրանց—երեսը չէր բռնում, իսկ տալու՝ փող չունէր։

Մօտեցաւ նրան դասընկերներից մինը, որի վրա աշխարհի վիշտը չէր տարածել իր թևերը։

—Հը, ինչո՞ւ չես գալիս, շուտ է ինչ է... Ողջոյնը, կարծեմ, տուե՞լ են։

—Այո։

—Դէ, գնանք։

—Ո՛չ, եկեղեցում սաստիկ շոք է, այստեղ մի քիչ ուզում եմ հովանալ. կգամ, կգամ...

Հարուստ ընկերը մնաւ եկեղեցի։

Մարկոսեանը մնաց մենակ։

Մի րոպէ նա մտադրվում էր խնդրել սրանից պարտք մի քանի բուբլի. սակայն այդ չարաւ։ Նրա դասընկերը պահպանել էր իր վրա այն զգեստը, որոնք յատուկ են կեանքի վրա պարզ և անհոգ տեսակէտ ունեցող մարդկանց... և ինչպէս կարող էր այդ մարդը ըմբռնել Մարկոսեանի հոգեկան դրութիւնը... Միևնոյնն է, նա ոչինչ չէր հասկանալ...

Բացի այդ՝ դէպի այդպիսի ընկերները Մարկոսեանի մէջ օրէցօր զարգացել էր ատելութիւն, իսկ տարիների ընթացքում բոլորովին բաժանել սրանցից։

Այդպիսի տիպերը զրգռում էին նրա ինքնասիրութիւնը։ Նայելով այդ մարդկանց անհոգ արամադրութեան, միամիտ հետաքրքրութեան, ակամայից զրգռվում էր նա թէ իր անհանգիստ բնաւորութեան և թէ իր քննական հայեացքի վրա։ Արձակվեց եկեղեցին։ Ժողովուրդը դուրս եկաւ։ Ամենքը շնորհաւորում էին մէկ-մէկու «Քրիստոս յարեաւ»... Նա ինքն էլ յետ չմնաց, շնորհաւորեց իրան մօտեցողներին։

Ժամերները սկսեցին ցրվել։ Ամեն մարդ ուղևորվում էր տուն ուրախ բերան բացելու։ Փողոցն էլ ընդունել էր տօնական կերպարանք։ Տների պատուհաններից երևում էին վառ ճրագներ։

Բայց ահա մի նոր մտածմունք... Մարկոսեանը վաղը պիտի քահանային փող տայ, իսկ այդ չունի։ Նա կանգնեց, երկար մտածեց, բայց ոչ մի միջոց չգտաւ։

Երեկոն շատ դուրեկան էր, հանդարտ, անամպ։ Երկնքում վառվում էին աստղերը։ Եկեղեցու, բակի ծառերը և թփերը, կարծես, մի ինչոր բանի մասին խօսում էին... Հեռ-

ուում լսում էին ժամերների փոխադարձ ուրախ շնորհաւորութիւնները, տղաների վազվոցը։ Այդ ամենը, կարծես, գալիս էր խլացնելու թշուառ մարդկանց սրտից դուրս թրռած հառաչանքներին։ Սակայն անցաւ այդ ևս։ Ուրախ ձայները կամաց—կամաց կարվեցին։

Մարկոսեանն ուղղեց իր քայլերը տուն։

Մարկոսեանը նստեց ընթրիքի իր կնոջ հետ։ Ոչնչով չէր զանազանվում նրանց ընթրիքը ամենօրեայ սովորական կերակուրներից։ Օրվայ պատշաճի ձուկն անգամ չկար։ Տօների առիթով ձուկն այնքան թանգացել էր, որ Մարկոսեանը վճռեց առանց ձուկի բերան բացել։ Ամուսինները կերան կարմիր ձուն, չոր փլաւ... և սրանով էլ վերջացրին իրանց ընթրիքը։ Ընթրիքի ժամանակ գրեթէ ոչինչ չխօսեցին։ Մարկոսեանը շարունակ մտածում էր, թէ ի՞նչ կանէ վաղը, ի՞նչով կվարձատրէ քահանային։ Նրան և տիրացուին ընդունելու համար հարկաւոր է ունենալ առնուազն 1 բուբլի 50 կոպէկ, մինչդեռ նրա գրպանում մնացել է միայն 12 կոպէկ։

Նա շատով անցաւ ննջարան։ Մարկոսեանը շատ տխուր էր։ Իսկոյն չքնեց նա։ Տօնի հանդիսաւոր գիշերն անգամ չէր ուրախացնում

նրան։ Մաքերի մի երկար շարան լցրեց նրա գլուխը։ Նա իրան համարեց շատ թշուառ։ Ինչի նման է նրա կեանքն իսկապէս։ Սեփական կաշու վրա կրել երիտասարդ ժամանակվանից զրկանքներ, տանել զոյութեան կռուի հարուածները—իսկ յետոյ... Միշտ քաշել նիւթական զգալի նեղութիւններ։ Ամբողջ տարի գործել, չծուլանալ, մինչև անգամ չծխել, և այդքան աշխատանքից յետոյ տարվայ մէջ մի տօն հանդիստ սրտով չդիմաւորել։ Փողի առաջ, ինչպէս մի երկիւղած ծառ քամու հարուածների դիմաց, շարունակ դողալ ու դողալ. խոնարհութեամբ գլուխ ծռել և անքակ երկիւղալի հոգնածութեան տակ։

Նրա առաջ բացվեցին «անիծված խնդիրների» պատճառները։ Ինչո՞ւ է իր վիճակն այդպէս թշուառ։ Ե՞րբ կբացվի մարդկանց սրտերի դաղանիքը...

Եւ նրա գլխում կաղմակերպվում էին անէծքներ... անէծքներ, որոնք ուղղվում էին հանդամանքների, զանազան պայմանական երևոյթների դէմ, այն երևոյթների, որոնց զոյութեան պարտական է միայն ինքը մարդը։

Այդպիսի մտածմունքներով նա մօտեցաւ գրասեղանին, աչքը դցեց նրա վրա դրած ժամացոյցին և շանթահար յետ քաշուեց։ Մէկից արդէն անցել էր տասը րոպէ։ Սենեակում տիրած խոր լռութիւնը մի տեսակ տարօրինակ բերեց նրա վրա։

Կինն էլ վաղուց քնել էր։

Այդ միջոց նրա գլխով անցաւ մի նոր միտք, որը մի քիչ թեթևացրեց նրան։ Միևնոյն գիշերը հաղարաւոր անկիւններում չե՞ն լսվում արդեօք այդպիսի հառաչանքներ, բողոքներ—և ո՞վ է սրանց լսողը։ Գանդատները և հոգեկան խուլ տանջանքները, կարծես, նրա համար են միայն, որ ինան անուշադի՞ր և մոռացվե՞ն...

Իսկ գիշերն անցնում էր, անցնում սահուն ու արագ, և նրա հետ միասին Մարկոսեանի մտքերն ու մտածմունքներն թռչում էին հեռու ու հեռու...

Միւս օրն, երբ քաղաքը ուրախ-ուրախ ողջունում էր սուրբ օրը, երբ ամենքը շտապում էին շնորհաւորել մէկ-մէկու իրաւունքների հաւասարութիւն պաշտպանող յաղթութեան տօնը,—քահանան, կատարելով իր ծխերի տնօրհնելը, հասաւ Մարկոսեանի տան դռանին և կամեցաւ ներս մտնել, օրհնել նրա տունը... Նա երեք անգամ հրեց դուռը, մի քանի րոպէ սպասեց—բայց բացող չեղաւ...

Քահանան ստիպված եղաւ թողնել ու

հեռանալ։ Կէս ժամից յետոյ եկան ժամկոչները և ծառաները շնորհաւորելու... Դուռը նոյնպէս փակ դատան։

Մարկոսեանը կամաւոր բանտարկութեան էր ենթարկել իրան այդ օրը։

29 ապրիլի
1903 թ.

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Երես
Ձենք ուզում, պատկեր	1.
Հին երգ, զատկական զրոյց	19.

ՄԵՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Ղօնաղլուղս Ճաց, վոդբվիլ, (սպառված) . . — „ —
2) Կոտրված սիրտ, վեպ, 170 երես. (սակաւաթիւ) — „ 40 կ.
3) Մեռած ծովում, վեպ, 390 երես . . . . . 1 ր. — „
4) Կեանքի պահանջը, պատմուածք, տպված 1902 թ. „Աղբիւր" ամսագրի №№ 9, 10, 11 և 12-ում — „ — „
5) Հարազատ գծեր, առաջին. պրակ. . . . . ?

Պատրաստ են տպագրութեան համար «Տիկին Աննա», պիես 3 գործողութիւնով և, «Հարազատ գծերի» 2-րդ պրակը։ Հրատարակել ցանկացողները կարող են դիմել այս հասցէով։

~~Астрахань.~~ Акиму Соловьянцу.

Тифлисъ.

Дворянская, № 3.

JUN 3 - 1916

Խմբագրատան Ս. Պ. Հ. Ազգային
Գրադարանի Գրադարան
Գրանցեց Գ. Գրիգորեան

«Ազգային գրադարան»
NL0357799

55642